ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մարտի 05-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-12/26

«Հայէրոնավիգացիա» ՓԲԸ կարիքների համար Ընդհանուր և հատուկ օգտագործման զանազան մեքենաներ ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-12/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 05.03.2026թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 05.03.2026թ.. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի գործընկերներ

Հրապարակված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-12/26 մրցույթի Չափաբաժին 2 և Չափաբաժին 3 ում առկա է պահանջի հետևյալ ձևակերպումը «դիզել գեներատոր (բաց կատարում, ներքին տեղադրման) CGM կամ համարժեք HIMOINSA, GENESAL ENERGY, OREFICE POWERGEN»

Հարց:

Խնդրում եմ պարզաբանել – Արդյո՞ք մրցույթի մասնակիցների կողմից կարող են ներկայացվել զուտ վերոնշյալ արտադրողների դիզելային գեներատորները , թե՞ մրցույթի մասնակիցների կողմից կարող են ներկայացվել Եվրոպական, Բրիտանական կամ ԱՄՆ այլ առաջատար արտադրողների դիզելային գեներատորները ՝ մնացյալ պահանջներին բավարարելու պայմանով:

Պարզաբանում N 1

Համաձայն ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի՝ Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:

Համաձայն ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

<u>Հանձնաժողովի գնահատող անդամներ՝</u>

Արմեն Բարսեղյան

Մովսես Մխիթարյան

<u>Հանձնաժողովի բացող անդամներ՝</u>

Հակոբ Եսայան

Կարեն Հակոբյան

<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>

Մարիամ Եսայան